



**ՆԱԽԱՐԱՐ**

**МИНИСТР**

« ..... » ..... 201 թ.  
..... / .....

**ՀՐԱՄԱՆ N 82-Ա**

03 ապրիլի 2013թ.

ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարության կանոնադրության 13-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարության Ավստրալիայի հայ համայնքների կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցության 2013-2014 թվականների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ և միջոցառումների ցանկը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սահմանել Ծրագրի իրականացման պատասխանատու ստորաբաժանում՝ Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարության աշխատակազմի Ամերիկայի հայ համայնքների վարչությունը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱԼ**

**ԾՐԱԳԻՐ**  
**ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ**  
**ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Ավստրալիայի հայ համայնքների կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցության 2013-2014 թվականների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» N ՆՀ-37-Ն հրամանագրի և 2012 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին» N 730-Ա որոշման դրույթների հիման վրա:

2. Ծրագիրը սահմանում է Ավստրալիայի հայ համայնքների առջև ծառայած մարտահրավերները, կրթամշակութային խնդիրները, դրանց լուծումներին նպատակաուղղված միջոցառումների ցանկը՝ նախատեսված 2013-2014 թվականների համար, պատասխանատու մարմինները և ակնկալվող արդյունքները:

**2. ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱԿԻՐՃ**  
**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ**

3. Հայերի առաջին փոքրաթիվ խմբերը Ավստրալիա մայրցամաք են եկել XIX դ. կեսին Հնդկաստանից, Ինդոնեզիայից, Սինգապուրից և Հարավարևելյան Ասիայի այլ երկրներից, Արևմտյան Հայաստանից: Հայերի Ավստրալիա գալը հատկապես խրախուսել է Սինգապուրում լույս տեսնող «Ուսումնասեր» հայալեզու լրագիրը (1849-53 թթ.), որի խմբագիր Գրիգոր Գալստյանը (Գալստանյան) և առևտրական Մելքում Մանուկ Նորջուղայեցին Ավստրալիայում հաստատված առաջին հայերից էին: Սակայն հայերի թիվը 1891 թվականին չի անցել մի քանի տասնյակից: 1918 թվականին Մեծ եղեռնից մազապուրծ փոքրաթիվ հայ գաղթականներ, գլխավորապես բարեգործական կազմակերպությունների միջոցով, ապաստանել են Ավստրալիայում: Նրանք բնակություն են հաստատել Սիդնեյ և Մելբուռն քաղաքներում, աշխատել են ոսկու հանքերում, գործարաններում, պետական գրասենյակներում, զբաղվել արհեստներով, առևտրով, նաև հողագործությամբ: Աչքի են ընկել մեծահարուստ բարերարներ Հարություն Ակինյանը,

Պալաքյան, Կայծքարյան, Կարազյոզյան, Քիվրիդյան, Շալջյան, Ամիրյան ընտանիքները: Մեծ ճանաչում է ունեցել Մելբուռնի համալսարանի պրոֆեսոր Կարազյոզյանը:

1918-1920 թվականներին Ավստրալիայի ներգաղթային քաղաքականության մեջ մտցվել է «անցանկալի տարագիրներ» հասկացությունը, ինչը որոշ չափով դժվարացրել է հայերի մուտքը մայրցամաք: Վիճակը փոխվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից (1939-45թթ.) հետո, երբ Ավստրալիայի տնտեսության հզորացման ռազմավարական նպատակով՝ կառավարությունը նախաձեռնել է երկրի բնակչության և արդյունաբերության մեջ ներգաղթողների թվի ավելացման գործը: Ավստրալիա գաղթած հայերն այս ժամանակաշրջանում ապահովվել են աշխատանքով ու կացարաններով: Ավստրալիայի համայնքն սկսել է կազմավորվել 1950-ական թթ. վերջին: 1960-ական թթ. սկզբին երկրում բնակվել է շուրջ 1000 հայ: Հայերի նոր զանգվածային հոսքը Ավստրալիա (գլխավորապես՝ Եգիպտոսից, նաև՝ Միջին Արևելքի երկրներից և Պարսկաստանից) տեղի է ունեցել 1962-65թթ.: 1966-ին, ըստ պաշտոնական մարդահամարի տվյալների հայերի թիվը Ավստրալիայում կազմել է 6 հազար, 1970-ական թթ.՝ ավելի քան 13 հազար: Ավստրալիայի գաղութը հաջորդ տարիներին ևս աճել է՝ Իրաքից, Սիրիայից, Լիբանանից, Կիպրոսից, Սուդանից, Եթովպիայից, Թուրքիայից, Հունաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, վերջին շրջանում նաև Հայաստանից ու նախկին խորհրդային հանրապետություններից գաղթած հայերի հաշվին: 2009 թվականի տվյալներով Ավստրալիայում ապրում է շուրջ 45-50 հազար հայ՝ կենտրոնացած Սիդնեյ (մոտավորապես՝ 40 հազար) և Մելբուռն (մոտավորապես՝ 10 հազար) քաղաքներում: Փոքրաթիվ հայ համայնքներ կան Ադելաիդա (մոտավորապես՝ 60 ընտանիք), Պերտ, Բրիզբեն, Հոբարտ, Կանբերա քաղաքներում: Վերջին 15-20 տարվա ընթացքում ավելացել է բժիշկների, փաստաբանների և այլ մասնագետների թիվը:

4. Ավստրալիայի համայնքի ներկայացուցչական մարմինը թեմական խորհուրդն է: Սիդնեյ և Մելբուռն քաղաքներում գործում են հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիներ, երկու ամենօրյա և վեց մեկօրյա վարժարաններ: Ազգային կյանքը կազմակերպում են ՌԱԿ, ՀՅԴ, ՍԴՀԿ տեղական կազմակերպությունները, Համազգային, Վահան Թեքեյան, «Նոր Սերունդ» մշակութային միությունների, ինչպես նաև ՀԲԸՄ, ՀՕՄ, ՀՄԸՄ, ՀՄՄ, ՀԵՄ մասնաճյուղերը: Հայերն ունեն ծերանոց՝ «Հայ հանգստյան տուն»: Լույս են տեսնում հայերեն պարբերականներ: Գործում են հայկական ռադիոժամեր: Գաղութն ունի աշխույժ մարզական կյանք:

Ավստրալիայի իրենց նպաստն են բերել 1988-ի Սպիտակի երկրաշարժից տուժած հայրենակիցներին:

**Մելբուռնի** հայ համայնքը կազմավորվել է 1960-ական թթ. սկզբին: 1966-ին այստեղ բնակվել է 1500, 1976-ին՝ 4500, 2003-ին՝ 10 հազար հայ: Համայնքում գործում են Ս. Աստվածածին Առաքելական եկեղեցին (որին կից՝ Ակինյան շաբաթօրյա դպրոցը) և Կաթողիկե եկեղեցի, ինչպես նաև Համազգայինի Մեսրոպ Մաշտոց մեկօրյա վարժարանը (1985-ից), եկեղեցասեր տիկնանց, երիտասարդական, պատանեկան միությունները, ՀԲԸՄ, ՀՄԸՄ Մելբուռնի մասնաճյուղերը, պոլսահայերի կազմած Սահակյան մարզական

միության ֆուտբոլի թիմերը: Գործում են պարաֆունը և երգչախումբ, ինչպես նաև հայկական ռադիոժամ: 1966-ից Մելբուռնում լույս է տեսնում «Հույս» ամսագիրը:

**Սիդնեյի** հայ համայնքը կազմավորվել է 1950-ական թթ. վերջին: 1983-ին այստեղ բնակվել 10 հազար, 2003-ին՝ 25 հազար հայ: Գործում են Հայ Առաքելական Սուրբ Հարություն, Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիներ: Սիդնեյում առաջին հայկական դպրոցը հիմնել է Արամայիս քին. Միրզոյանը՝ 1960-ին: Ներկայումս գործում են Համազգայինի Արշակ և Սոֆի Գոլստրեն, ՀԲԸՄ Ալեքսանդր ամենօրյա, և Ալեք Մանուկյան, Թարգմանչաց, Փափագյան, Թումանյան մեկօրյա վարժարանները: Աշխույժ գործունեություն են ծավալում հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները և նրանց հովանավորությամբ գործող մշակութային միությունները, ՀԲԸՄ, ՀՕՄ, ՀՄԸՄ, ՀՄՄ Սիդնեյի մասնաճյուղերը, եկեղեցասեր տիկնանց, երիտասարդական, պատանեկան մարզական կազմակերպությունները, Ավստրալիայի միացյալ ընկերակցությունը և այլոք: Գործում են «Լուսավորիչ», «Կոմիտաս» երգչախմբերը, պարային և թատերական խմբեր, ինչպես նաև «Էրեբունի», «Նոր սերունդի ծայն» ռադիոժամերը: Սիդնեյում լույս են տեսնում «Լույս», «Արմենիա», «Միություն», «Գարուն», «Զանգ» պարբերականները:

5. Ավստրալիայում առաջին ազգային կառույցը՝ Հայ եկեղեցու մարմինը, հիմնվել է 1950-ական թթ. վերջին, Սիդնեյ և Մելբուռն քաղաքներում: Ներկայումս գործում են հայ ավանդական երեք կուսակցությունների տեղական կազմակերպությունները, բարեգործական, հասարակական, մշակութային և երիտասարդական մի շարք կազմակերպություններ:

6. Ավստրալիայի հայկական կառույցների մեջ համագործակցության առաջընթաց է նկատվում: Այս մասին փաստում է նորաստեղծ «ՍՓՅՈՒՌԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»-ը: Կառույցի հիմնադիր ժողովը, ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական՝ Էդիկ Դարբինյանի գլխավորությամբ, տեղի է ունեցել 2012թ.-ի նոյեմբերի 21-ին, նպատակն է համախմբել Ավստրալիայի հայ համայնքը և ամրապնդել Սփյուռք-Հայրենիք կապերը: Կառույցին անդամակցում են՝

- 1) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի,
- 2) Հայ Կաթողիկե Եկեղեցի,
- 3) Հայ Ավետարանական Եկեղեցի,
- 4) Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցություն,
- 5) Հայ յեղափոխական դաշնակցություն,
- 6) Ռամկավար ազատական կուսակցություն,
- 7) Հայկական բարեգործական ընդհանուր միություն,
- 8) Հայ օգնության միություն

### 3. ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

7. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կարևոր առանձնատկություններից է՝ դիմակայել աշխարհի տարբեր երկրներում հայկական Սփյուռքի ուժացմանը և կանխել հայության լեզվամշակութային ինքնության կորուստը: Հայաստան-Սփյուռք կապերի թուլացումը, գործնական շփումների բացակայությունը կարող են վտանգ ներկայացնել հայ ժողովրդի ազգային անվտանգության հիմնարար արժեքների տեսանկյունից:

8 Ինչպես Սփյուռքի որոշ հայ համայնքներում, այնպես էլ Ավստրալիայի հայ համայնքներում ապրող սփյուռքահայերի մի զգալի հատված չի տիրապետում հայերեն լեզվին կամ տիրապետում է մասնակի, իսկ որոշների մոտ հայերեն լեզվի գործածումը սահմանափակվում է միայն կենցաղային մակարդակի բանավոր խոսքով: Հայերենի վատ կամ սահմանափակ իմացությունը հաճախ խոչնդոտում է հայ մարդուն՝ ներգրավվելու հայ համայնքի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում և պատճառ է դառնում նրա էլ ավելի մեկուսացմանն ու օտարացմանը:

9. Վերը նշված հիմնախնդիրները դարձել են չափազանց կարևոր Ավստրալիայի հայկական համայնքի համար, ինչը և պահանջվում է շտապ իրականացնել որոշակի ծրագրեր՝ այդ մայրցամաքի հայ համայնքների հետ հուսալի և արդյունավետ կամուրջներ ստեղծելու, հայոց լեզվի իմացությունը և օգտագործումը խթանելու, կրթական, մշակութային և հայագիտական օջախների արդյունավետ գործունեությանը, համայնքներում առկա ներուժի հաշվառմանը, համախմբմանը և այն համահայկական ծրագրերում ներգրավելու խնդիրներին աջակցելու համար:

10. Ավստրալիայում հայկական սփյուռքի ազգային դիմագիծը վտանգված է.

1) հայ համայնքի աշխարհագրական դիրքը և մեծ հեռավորությունը Մայր հայրենիքից և հայաշատ կայուն զարգացող հայ համայնքներից, ինչպես նաև համայնքը համեմատաբար հին լինելը.

2) Հայաստանի և հայության մասին տեղեկատվության ոչ դյուրին հասանելիությունը.

3) հայ ընտանիքներում ծնելիության ցածր մակարդակը.

4) խառնամուսնությունների աճը.

5) Հայաստանի Հանրապետության կողմից համայնքներում մշակութային լուրջ ծրագրերի իրականացման բացակայությունը, արվեստի բնագավառի կադրերի և նրանց վերապատրաստման ծրագրերի պակասը.

6) սակավաթիվ ուսուցիչների վերապատրաստումը հայրենիքում.

7) երիտասարդների Մայր հայրենիք այցելությունների շատ չնչին տոկոսը.

8) հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության դասագրքերի պակասը, բազմազանությունը և դպրոցական ծրագրերի միասնական չլինելը:

11. Այսօր Ավստրալիայի հայկական համայնքներում ազգա-մշակութային ինքնության թուլացումը սպառնում է հայ համայնքների գոյությանը այդ տարածաշրջանում: Համայնքներում արդիական է ստեղծել հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ակտիվացման հնարավորություններ (մասնավորապես՝ ժամանակակից բարձր տեխնոլոգիաների միջոցով):

12. Համայնքներում խիստ զգացվում է Հայաստանի կառավարության պետական հոգաձության և աջակցության կարիք՝ ուղղված բոլոր տիպի կառույցներին:

13. Տեղի համայնքներում զգացվում է Հայաստանում կրթություն ստացած կամ վերապատրաստված մասնագետների կարիք: Տարածաշրջանում գործող մշակութային միությունների և հայաստանյան նմանատիպ կառույցների միջև կապը թույլ է և չհամակարգված:

14. Հատկապես հրամայական է դարձել ծագումով հայ երիտասարդներին հայադարձության նոր լիցքեր հաղորդելը, մայրենի լեզվի ուսուցումը, հնարավորինս նրանց մասնագիտական կրթության կազմակերպումը Հայաստանի բուհերում և երիտասարդական կապերի ընդլայնումը:

15. Շատ քիչ են զուտ հայկական դպրոցները՝ ներկայումս գործում են երկու (մեկ հայկական ամենօրյա վարժարան՝ հայ կաթոլիկների Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ամենօրյա դպրոցը այժմ դադարեցրել է իր գործունեությունը) ամենօրյա և վեց մեկօրյա վարժարաններ, որոնցում հայոց լեզվի դասավանդման վիճակը հեռու է բավարար լինելուց: Դպրոցներում հայկական ուսուցման ծրագրերը խիստ վերանայման և համակարգման կարիք ունեն: Վերջին տարիներին դպրոցներում կրթության որակի և աշակերտների ընդհանուր թվի անկման հետ մեկտեղ՝ հայկական կրթօջախներում ի հայտ են եկել նաև ֆինանսական խնդրներ՝ կապված երիտասարդ մանկավարժական կադրերի ներգրավման, դասագրքերի առաքման և թարմացման հետ:

Ավելին, այդ երկրներում նկատվում է նաև հայերենով տպագրվող թերթերի և ամսագրերի, հեռարձակվող ռադիո և հեռուստահաղորդումների պակաս, ինչն իր հերթին բացասական է անդրադառնում համայնքների ազգային նկարագրի պահպանման և զարգացման վրա:

#### **4. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

16. Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել.

1) Ավստրալիայի հայ համայնքներում ազգային ինքնության ամրապնդմանն ու զարգացմանը,

2) հայեցի կրթության համակարգի ընդլայնմանը և արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ տարածաշրջանի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հրատարակման, հայրենիքից ուսուցիչների գործուղման,

3) Ավստրալիայի քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքին հայ մարդու ինտեգրման գործընթացներին՝ նպաստելով Ավստրալիայի և Հայաստանի երկկողմ կապերի զարգացմանը և միջազգային գործընթացներին Հայաստանի Հանրապետության ինտեգրմանը,

4) Ավստրալիայում հայ ներուժի հայտնաբերմանը, համախմբմանը և օգտագործմանը, համահայկական մասնագիտական խմբերի կազմում հայ գիտնականների և մասնագետների ընդգրկմանը,

5) համահայկական տեղեկատվական բազայի ձևավորմանն ու զարգացմանը, Հայաստանի Հանրապետության և հայկական աշխարհի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության աստիճանի մեծացմանը: Հայաստանի և Ավստրալիայի հայ համայնքների փոխադարձ կապի հնարավորությունների զարգացման խթանում,

6) Ավստրալիայի հայ համայնքների մշակութային կյանքի աշխուժացմանը, զարգացմանը, Հայաստանի և Սփյուռքի միջհամայնքային մշակութային կապերի ամրապնդմանը,

7) տարածաշրջանում Հայաստանից և հայաշատ համայնքներից տարբեր ստեղծագործական խմբերի, համույթների և անհատ մշակութային գործիչների այցելությունների կազմակերպմանը,

8) համայնքում նոր կրթական համակարգերի ներդրմանը, ուսուցիչների պատրաստմանն ու վերապատրաստմանը, համապատասխան դասագրքերով, ձեռնարկներով, մեթոդական նյութերով, մանկական հանրագիտարաններով, գրքերով, քարտեզներով ապահովմանը, այդ թվում էլեկտրոնային տարբերակներով,

9) ավստրալահայ կազմակերպությունների հետ մեկտեղ՝ վարել մայրենի լեզվի, հայ դպրոցի և հայ ընտանիքի քարոզչությանը,

10) կրթօջախներին տարբեր բնույթի օգնություն ցուցաբերելու նպատակով «քույր» դպրոցների գաղափարի իրագործմանը՝ համայնքի և Հայաստանի դպրոցների միջև,

11) կիրականօրյա դպրոցների բացմանը հայաշատ այլ վայրերում, դրանցում սովորողների թվի ավելացմանը,

12) հեռահար ուսուցման միջոցով նպաստել հայեցի կրթական ծրագրերի ներդրմանը և իրականացմանը.

13) նոր կրթական ծրագրերի ստեղծմանն ու իրականացմանը՝ դրանցում ընդգրկելով Ավստրալիայում բնակվող հայ մասնագետներին, նրանց ներառելով դասագրքերի մշակման ու հրատարակման, հայ գրականության արժեքների ամբողջական ժողովածուների ստեղծման աշխատանքներին.

14) Ավստրալիայի հայ համայնքների մասնակցությանը Հայաստանը որպես «հայի օջախ» կառուցելու գործընթացին, հայ համայնքի ավելի մեծ թվով երիտասարդների ընդգրկմանը ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող ծրագրերում,

15) ապահովել Հայաստանի մտավորականների մասնակցությունը Ավստրալիայում կազմակերպվող համահամայնքային միջոցառումներին, գիտաժողովներին և այլն.

16) մշակույթը դարձնել այն հիմնական ոլորտը, որը հնարավորություն կտա ներգրավել Ավստրալիայում բնակվող հայ արվեստագետներին Հայաստանի մշակութային կյանքում՝ իրականացնելու մշակութային համահայկական ծրագրեր (փառատոներ, ցուցահանդեսներ, հյուրախաղեր և այլն):

## **5. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ**

17. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն,
- 2) Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տրամադրվող միջոցները,
- 3 ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

## **6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

18. Ծրագրի իրականացումը համակարգվում է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կողմից՝ ՀՀ կրթության և գիտության, մշակույթի նախարարությունների, Հայաստանի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի, «Հայաստան» համահայկական հիմնադրամի, ինչպես նաև այլ մասնավոր և հասարակական կառույցների հետ սերտ համագործակցությամբ:



**ՑԱՆԿ**

**ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
2013-2014 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

Միջոցառման անվանումը	Նպատակը	Իրականացման ուղիները	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու մարմիններ
1. Ավտորալիայի հայկական կրթօջախների ուսուցիչների վերապատրաստում տեղում	Օժանդակություն հայեցի կրթությանը և դաստիարակությանը, հայոց լեզվի, հայ գրականության, հայ ժողովրդի ու հայ եկեղեցու պատմության դասավանդման որակի բարձրացմանը	Ուսուցիչների վերապատրաստում Հայաստանում և տարածաշրջանում՝ գործուղված մասնագետների օգնությամբ	2013 թ.	Ավելի քան 30 ուսուցիչների վերապատրաստում համայնքներում	ՀՀ սփյուռքի նախարարություն  ՀՀ կրթության և գիտության նախարարություն
2. Հայաստանի մշակութային համույթների, արվեստագետների, անհատ կատարողների համերգների, ներկայացումների կազմակերպում համայնքներում	Հակազդում լեզվամշակութային ուժացման գործընթացին, հայ ոգու և մշակութային արժեքների քարոզում, ազգային ինքնության զորացում, համայնքների մշակութային կյանքի աշխուժացում	Ծրագրերի կազմում, համաձայնեցում տեղական կառույցների հետ, ստեղծագործական խմբերի գործուղումներ համայնքներ, միջոցառումների անցկացում Սիդնեյում, Մելբուռնում	2013-2014 թթ.	Տարեկան երկուական մշակութային խմբերի գործուղում	ՀՀ սփյուռքի նախարարություն  ՀՀ մշակույթի նախարարություն

<p>3. Հայաստանյան մշակութային միջոցառումներին Ավստրալիայի հայ համայնքներում գործող թատերախմբերի, երգչախմբերի, անհատ կատարողների և արվեստագետների մասնակցություն, ժամանակակից ավստրալահայ նկարիչների անհատական ցուցահանդեսի կազմակերպում Հայաստանում</p>	<p>Սփյուռքում հայ մշակութային ինքնության պահպանում և զարգացում, Հայաստանի մշակութային կյանքում համայնքի արդյունավետ ինտեգրում, համույթներին մասնագիտական օգնության ցուցաբերում, մշակութային համագործակցության նոր ծրագրերի նախաձեռնում</p>	<p>Փառատոնների մասին ժամանակին տեղեկատվության տարածում, հրավիրում «Իմ Հայաստան» փառատոնին, «Ոսկե ծիրան» կինոփառատոնին և համազգային նշանակության այլ միջոցառումների</p>	<p>2013-2014 թթ.</p>	<p>Տարեկան 2 խմբերի մասնակցություն, մեկ ցուցահանդեսի կազմակերպում</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն</p>
<p>4. Տարածաշրջանի կրթօջախներին դասագրքերի, ուսումնամեթոդական և օժանդակ նյութերի տրամադրում, այդ թվում էլեկտրոնային տարբերակներով</p>	<p>Ուսման որակի բարձրացում, միասնական ծրագրերի ներդրում, նպաստում հայկական կրթօջախներում հայոց լեզվի և պատմության դասավանդումը ուսումնական հիմնական դասընթացներ</p>	<p>Պահանջարկի ուսումնասիրում, դասագրքերի ստեղծում, ուսումնամեթոդական և օժանդակ նյութերի մշակում, հրատարակում, առաքում</p>	<p>2013-2014 թթ.</p>	<p>Տարեկան ավելի քան 200 կտոր հայոց լեզվի և հայոց պատմության մեթոդական ձեռնարկների տրամադրում համայնքների կրթօջախներում սովորող</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>

	դարձնելու գործընթացին			աշակերտներին	
5. Հեռավար տեսակոնֆերանսներ, դասընթացների կազմակերպում	Հայկական կրթօջախների ուսումնակրթական և դաստիարակչական խնդիրների քննարկումներ և վերլուծություն, հայագիտության խթանում	Սփյուռքի կառույցների հետ համատեղ կազմկոմիտեների ստեղծում, թեմաների ընտրություն, միջոցառումների անցկացում և արդյունքների մասին տեղեկատվության տարածում	2013-2014 թթ.	Տարեկան 2 հեռավար համաժողովի կազմակերպում	ՀՀ սփյուռքի նախարարություն
6. Հայրենաճանաչողության և լեզվաուսուցման աշակերտական մրցույթների, օլիմպիադաների և խաղերի կազմակերպում	Դպրոցահասակների շրջանում հայագիտական և լեզվական գիտելիքների տարածում, հայոց լեզվի ուսուցման խթանում	Տարածաշրջանի կրթօջախների հետ համատեղ հանձնաժողովների ստեղծում, մրցույթների, օլիմպիադաների, խաղերի, անցկացում և արդյունքների քարոզում, այդ թվում նաև հեռահաղորդակցման տեխնոլոգիաների	2013-2014 թթ.	Հայոց լեզվի և գրականության տարեկան՝ մեկական օլիմպիադա և մրցույթ	ՀՀ սփյուռքի նախարարություն  ՀՀ կրթության և գիտության նախարարություն

		միջոցով			
7. Համայնքների՝ հայերենին չտիրապետող, անդամների համար ուսուցողական, այդ թվում հեռահար, ծրագրերի իրականացում, հայկական վիրտուալ քոլեջի աշխատանքներին համայնքի ներկայացուցիչների մասնակցության ապահովում	Լեզվամշակութային ուժացման դիմակայում հայապահպանություն	Համապատասխան դասընթացի մշակում, առցանց (On line) ուսուցման միջոցների օգտագործում	2013-2014 թթ.	Համայնքից առնվազն 50 մասնակցի ուսուցում	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀԲԸՄ
8. Ֆիլմի նկարահանում Ավստրալիայի հայ համայնքի մասին (Հայկական Ավստրալիա)	Ավստրալիայի արդի վիճակի հանրահռչակում	Նկարահանող խմբի գործուղում Ավստրալիա	2014 թթ.	Մոտ 40 րոպե տևողությամբ ֆիլմ Ավստրալիայի հայ համայնքի մասին	ՀՀ սփյուռքի նախարարություն, Հայաստանի Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ (համաձայնությամբ)
9. ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրին ավստրալահայ երիտասարդների	Նպաստում սփյուռքահայ երիտասարդության ազգային ինքնության պահպանմանը, Հայաստան-Սփյուռք	Տարածաշրջանի գործընկերների ընտրություն, խմբերի ձևավորում, այցերի	2013-2014 թթ.	Տարեկան առնվազն 10-15 հոգի	ՀՀ սփյուռքի նախարարություն

<p>ճանաչողական այց Հայաստան</p>	<p>կապերի սերտացմանը, հայ ժողովրդի հոգևոր և մշակութային միասնության ամրա- պնդմանը</p>	<p>կազմակերպում, հյուրընկալում Երևանի և ՀՀ մարզերի հայ ընտանիքներում,</p>			
<p>10. Ավստրալիայի հայ համայնքի ներկայացուցիչների մասնակցություն ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռք» ամսուային դպրոցի դասընթացներին</p>	<p>Նպաստել մայրենի լեզուի սովորել ցանկացողներին արագացված մեթոդներով լեզվին տիրապետելու, մասնագետներին վերապատրաստելու, Սփյուռքի ՋԼՄ-ի, երիտասարդ առաջնորդներին հայրենիքին կապելու և նրանց ազգային ինքնությունը հզորացնելու համար</p>	<p>Հայոց լեզվի արագացված դասընթաց Ազգային երգի ու պարի խմբավարների, պարուսույցների վարպետության դասընթացներ Կրթօջախների տնօրենների, կազմակերպիչների և ուսուցիչների, վերապատրաստում Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դասընթաց Սփյուռքի լրագրողների դասընթաց</p>	<p>2013-2014 թթ.</p>	<p>Տարեկան առնվազն 5 հոգի</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարություն  Երևանի պետական համալսարան</p>

<p>11. Տարածաշրջանի հայկական մասնագիտական ներուժի հաշվառում և ներգրավում Հայաստանի սոցիալ- տնտեսական և կրթա մշակութային բնագավառներում</p>	<p>Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացում, սփյուռքի մտավոր ներուժի օգտագործում</p>	<p>Մասնակցություն մասնագիտական խմբերի համահայկական համաժողովներին, ընդգրկում առանձին ոլորտներում իրականացվող ծրագրերում</p>	<p>2013-2014 թթ.</p>	<p>Սփյուռքի ներուժի օգտագործման մեխանիզմների ստեղծում, մասնագիտական կապերի ընդլայնում</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>
<p>12. Հայաստանի և Ավստրալիայի հայկական կրթօջախների մասնակցությամբ «Քույր» դպրոցների ստեղծում և դրանց համագործակցության ապահովում համացանցով</p>	<p>Կրթության որակի բարձրացում և համապատասխանեցում ՀՀ-ում գործող կրթական չափանիշներին, սփյուռքի կրթօջախներին մեթոդական օգնության ցուցաբերում, հայրենիքի հետ կապերի ամրապնդում</p>	<p>Տարածաշրջանի հայկական և Հայաստանի առաջնակարգ կրթօջախների միջև կապերի հաստատում, համագործակցության ծրագրերի մշակում</p>	<p>2013-2014 թթ.</p>	<p>Տարածաշրջանի բոլոր դպրոցների համար «Քույր» դպրոցների ընտրություն, պայմանագրերի կնքում, այլ տարածաշրջանների հայ համայնքներում փորձի ներդրման նախադրյաների ստեղծում</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>

<p>13. Տեղի հայկական կառույցների հետ համատեղ Հայաստանի պետական և ազգային տոներին նվիրված միջոցառումների կազմակերպում համայնքներում, ՀՀ պետական խորհրդանիշների տրամադրում բոլոր համահայկական կառույցներին</p>	<p>Նոր սերնդի հայեցի դաստիարակություն, ՀՀ պետական քաղաքականության առաջնահերթությունների ներկայացում, հայրենիքի, հայ եկեղեցու մասին տեղեկատվության տարածում, համահայկական խնդիրների լուծմանը սփյուռքի մասնակցության խթանում</p>	<p>Համայնքային կառույցների հետ միջոցառումների ցանկի ընտրություն, անհրաժեշտ նյութերի տրամադրում, հոբելյանական միջոցառումների անցկացում և արդյունքների քարոզում</p>	<p>2013-2014 թթ.</p>	<p>Համայնքում տարեկան առնվազն երեք միջոցառման կազմակերպում</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարություն</p>
<p>14. Ծրագրի իրականացման պատասխանատու անձանց գործուղումներ Ավստրալիայի հայ համայնքներ</p>	<p>Գործընթացի պլանավորում, տեղում հայ համայնքի արդի իրավիճակի ուսումնասիրություն, խնդիրների վերհանում և ծրագրի իրականացման վերահսկում</p>	<p>Գործընթացի կարգավորում և վերահսկում</p>	<p>2013-2014 թթ.</p>	<p>Տարեկան երկու գործուղում</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարություն</p>